

որպէս մայր որդւովք բերկրեալ բարգաւաճեալ պայծառանայ, եւ գոյով մեք աստէն ի տես սիրելի ազգականաց եւ բարեկամաց մերոց. եւ ունելով շայնձնարարութիւն Աստուածաձեք եւ սիրելի որդիքն մեր ի Քրիստոս նորաշէն Հայաբաղաբէր, մեծաւ ջերմեանդութեամբ խնդրեցին ի մէջ զեղբայրութիւնն ընդ անուանաւորութեամբ եւ պաշտպանութեամբ մեծի եւ Սուրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, զոր ի վաղուց հետէ ունիլ փափաքէին, սահմանել եւ կանոնօք հաստատել յանձն աւուուաբ: Վասն այսորիկ ի յաճեցուցանել զջերմեանդութիւն Քրիստոսի հաւատացեալ ժողովորեանս այսորիկ դէպ յԱմենասուրբ Հայրն եւ լուսաւորչն մեր կատարելով զբարեպաշտ ինդրուածս նոցա, զոյնն Եղբայրութիւնն սահմանել, հիմնել, կառուցանել եւ կանոնօք հաստատել յանձն աւուաբ. որպէս արդէն իսկ յանձնարարական Հեղինակութեամբ մերով զոյնն Եղբայրութիւնն Սրբոյն Գրիգորի Հօր եւ Լուսաւորչն մերոյ յեկեղեցւոք Աւետման Սուրբ Աստուածածնին որ ի Հայաբաղաբս է եւ յեկեղեցւոյն Ամենասուրբ Երրորդութեան, զոր շինելոց է ժողովուրդն ի Հայաբաղաբս յայսմիկ, սահմանեմք, հիմնեմք, կառուցանեմք եւ հաստատեմք ի փառս եւ ի գովեստ ամենակարողն Աստուծոյ եւ ի պատիւ Երկոյ երանաւոր միշտ կուսին Մարիամայ Աստուածածնին եւ նոյն Հօր մերոյ սուրբոյն Գրիգորի Լուսաւորչին: Եւ այսու կոնդակաւս վճռեմք զի Եղբայրութիւնս այս իբրեւ զճշմարիտ եւ զօրինաւոր Եղբայրութիւն զամենայն իրաւունս եւ զազատութիւնն որպէս եւ այլք ճշմարիտ եւ օրինաւոր Եղբայրութիւնք ունին եւ վայելեն միշտ եւ յամենայն տեղիս ունիցի եւ վայելեցէ. սղորագրելով զսա ընդ ստորագրեալ կանոնօքն եւ Պարտաւորութեամբն ըստ պատշաճին զոր ի Սուրբեկական սուրբ Աթոռոյն ունին Եղբայրութիւնք մեր Հայոց ի Լեհաստան, զորս աշխարհական բարբառով ի հասկացումն ամենեցուն գրեւ հրամայեցաք: Այլեւ յորդուրեմք ի Քրիստոս զամենայն եղբարս մի ըստ միոյն, զի ի պատիւ այլքան մեծի եւ սուրբ Հօր մերոյ, որոյ քրտնաջան եւ մարտիրոսական արդեամբն բովանդակ ազգս Հայոց ի լոյս Աստուածգիտութեան անաւ. նաեւ ի շահաւետութիւն հոգւոց իւրեանց եւ ի Քրիստոս հանգուցեալ ննչեցելոցն, զպարտաւորութիւնս իւրեանց անխափան կատարեսցնել, ժիլք եւ ջերմեանդք եւ յաճախ ի բարեգործութիւնս եղիցին, որպէս զի յետոյ զբարեպաշտ աշխա-

տանաց իւրեանց վարձս ընդունիլ եւ ընդ սուրբ Հօր մերում իբրեւ հարազատ որդիք զարքայութիւնն երկնից ժառանգել արժանացցին: Ամէն:

Կանոնք եւ Պարտաւորութիւնք Եղբայրութեան Սրբոյն Գրիգորի մեծի Հայրապետին, Պաշտպանին եւ Լուսաւորչին ամենայն Հայոց:

«) Այս Հայաբաղաբս Տանուտիրաց Եղբայրութիւնը պի ունենայ իրեն պաշտպան զմեր սուրբ Հայրը, Գրիգոր Լուսաւորչին: Եղբայրքը զտօնը գիւտ նշխարաց սուրբ Լուսաւորչն մեծ պայծառութեամբ եւ ջերմեանդութեամբ պի կատարին. ինչպէս որ ալ վար գրած է Պարտաւորութեանը մէջ: Այս տօնիս ամէն Եղբայր պի խոստովանի ու պի հաղորդվի, որ զնորդութիւնը այս տօնիս, զորն որ այս Եկեղեցին Աւետման սուրբ Աստուածածնայ յախտնական ունի, կարնայ ընդունելոյ: Ար եղբայրը այս տօնիս տունը չի գտիլ, պարտական է օղկայ ալ մտիկ տօնի խոստովանելու ու հաղորդվելու:

(Ըրօնօնիւն:)




ՄԱՐԿԵՍՏԱՆԻՍ ԵՄԵՆԵՍ

ՆԱՐԿԵՍՏԱՆԻՍ ԵՄԵՆԵՍ




աւարկութեան համար նշանաւոր գիւտ մըն է ազգայնոյ մը հնարած այս գործին, որ արդէն ամէն կողմանէ գովութեամբ ընդունուած է: Հնարին հնդկահայ է՝ Մ. Փօլ (M. J. Paul), որ իւր այս գիւտին համար անցեալ տարի Փարիզի Գիտութեանց չեմարանին Պատուոյ անդամ ընտրուեցաւ եւ ոսկիէ մեծ միտակի արժանացաւ:

Հիշուի, քանզի անոնք անհաշիվ չեն



Հնարուածքն է նաւերու ածուխ առնելու նորագոյն գործիք մը: Յայսօր նաւերն իրենց պէտք եղած ածուխն ստիպուած էին մարդկային բազկօք ներս առնուլ, որ երկար, տաժանելի եւ աղտոտ բան մըն է. վասն զի օրինակի համար եօթն օր ճամբորդող մեծ նաւ մ'առ նուազն 3000 տակառաջափ ածխոյ պէտք ունի, որուն համար երեք օր պէտք է, եւ այս միջոցին նաւը ածխոյ փոշով կը ծածկուի: Այժմ հայազգի ճարտարագէտն գտած է գործիք մ'որ ինքնին կը փոխադրէ ածուխը նաւուն մէջ, եւ այն. արդէն 100 տակառաջափ ժամուան մը


օտարերկրեայ նաւարկու ընկերութեանց մարդիկ են, եւ մեծ գոհութիւն յայտնեցին գիւտին փորձին յաջողութեան համար, որ նաւարկութեան մեծ ծառայութիւն կը մատուցանէ: Անգղիոյ եւ այլ ազգաց մեծ թերթերը գովութեամբ խօսեցան գիւտին վրայ, եւ Անգղիոյ ծովային ճարտարագիտաց ժողովն քննելով գիւտն՝ յայտնեց իւր գոհութիւնը: Այժմ արդէն ձեռնարկուած է կազմելու 5 միլիոն ֆրանքի դրամագլխով ընկերութիւն մը՝ գործադրելու գիւտին ընձեռած նպատակները, եւ գրեթէ ամէն ծովային տէրութիւնք արտօնա-



Պատկ. 2. Նոյն՝ ընդ երկայնութիւն կտրուած:

մէջ. եթէ 6—8 այսպիսի նաւակներ միասին գործեն՝ 4 ժամու մէջ նաւուն պաշարը կը հոգացուի: Թէ՛ ժամանակի եւ թէ՛ ծախսոց ամենամեծ խնայութիւն է այս:

Նաւակին ձեւը կը տեսնուի Պատկեր 1ին մէջ. — Պատկ. 2 երկայնութեան եւ Պատկ. 3 լայնութեան կտրուած կը ցուցնեն նաւակն,



Պատկ. 3. Նոյնը՝ լայնութեան:

որուն մէջ A նաւակն է, B անվերջ շարժակը եւ C վերամբարձ մեքենան, որմէ նաւ կը փոխադրուի ածուխն, D եւ D' ածխոյ ամբարանոցներն են, մին բաց դռնակով՝ միւսը գոց:

Այս դրութեանս փորձն եղաւ 1893 Յուլիսի 4ին, որուն ներկայ էին Անգղիոյ ճարտարագիտաց ընկերութեան գահերէցն, ծովագիւտութեան ներկայացուցիչք, անգղիացի եւ

գրութիւն շնորհած են: Աւստրիոյ մէջ արտոնագրին թիւն է 3855 եւ 1891, Հունգարիոյ՝ 20, 211 եւ 1891:

Ռուսութիւն կը պատճառէ մեզի այն կէտն ի մասնաւորի որ հայազգւոյ մը ճարտարարուեստ գիւտն այսպէս յաջողութիւն գտած է ամէն մեծ ծովագնաց ազգաց պետութեանց եւ անոնց մասնագիտաց կողմանէ:



ՓԵՂԱՐՈՒԽՆՍԱԿԱՆ

ՈՐԵՆԻՍԵՆԸ ԵՆԴՊԵՏՈՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ ԹԻՒՆ

(Մ. Ե. Լ.)

Անհամար գործունեայ կենաց մ'ունեցաւ հիւսիսային Բալթիկի մէջ Եւրոպայի տի Լասոյ: Լասոյ 1520ին Բեղգիոյ Մոնս քաղաքը ծնաւ. գեղեցիկ ձայն ունենալուն պատճառաւ պղտիկուց ձեռքէ ձեռք կը յափշտակուէր: Տասնուորս տարեկան եղած ատեն Փերդինանդոս Կոնգալա Սիկիլիոյ փոխարքան զինք իրեն հետ Խալաթա տարաւ, ուր երաժշտական արուեստն ուսանելէն եւ կատարե-